№ 154 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 19 1900 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 19 № 154

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մրցելու ընդունակութեան առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Նամակ կարսից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական գործերը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Այսպէս էր խօսում Զրադաշտը.

ՄՐՑԵԼՈՒ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Պարսիկը, իբրև էժան բանուորական ոյժ, վաղուց յայտնի է մեր երկրում, Անդրկովկասում: Նա կատարում է երկրագործական աշխատանքներ Երևանի, Գանձակի և Բագուի նահանգներում, մանաւանդ խոտահարքի և հնձի ժամանակ: Նա աշխատում է մեր երկրի խմուղիների վրա, ջարդելով քարեր եւ նրանց փռելով ուղիների վրա: Նա պարապում է բեռնակրութեամբ Բագուում, Պետրովսկում և ուրիշ տեղերում:

Վերջին տարիները պարսիկ բանուորը մեծ աջողութեամբ տեղ է գրաւում Վոլգայի ափերում, դուրս մղելով մի քանի գործերում ռուս եւ թաթար բանուորներին: Պարսիկ բանուորը այնքան գնահատելի մի գործաւոր է դարձել, որ ապրանքներ փոխադրող ընկերութիւններից մէկը հրաւիրել է պարսիկ բանուորների խումբ Ցարիցինի նաւահանգստում աշխատելու համար: Պարսիկը աւելի էժան է, աւելի չարքաշ և աւելի ճշդապահ, քան Վոլգայի ափերի աշխատաւոր ռուսը և թաթարը: Այն ժամանակ, երբ, օրինակ, մի հազար պուդ ապրանք շոգենաւից դուրս կրելու համար ռուս բանուորը պահանջում է 5 և $5^1/_2$ բուբլի, պարսիկը համաձայնում է համար ռուս բանուորը պահանջում է 5 և $5^1/_2$ բուբլի, պարսիկը համաձայնում է վերցնել 4 և $4^1/_2$ բուբլի: Կապալառուները շատ անգամ վարձում են պարսիկ բանուորին ամսական 10—12 բուբլիով և բարձում են նրանց վրա տաժանակիր աշխատանք, որ ռուս բանուորը հազիւ կը համաձայնվեր կատարել մէկ ու կէս և երկու անգամ աւելի թանդ գնով: Աշխատանքի էժանութիւնը դարձնում է պարսիկ բանուորին կամաց-կամաց մի զօրեղ մրցող ոյժ, որ իր ձեռքն է առնում բեռնակրութեան ամբողջ ասպարէզը և դուրս է մղում միւս բոլոր տարրերը:

Այդ աջող կերպով մրցող բանուոր ոյժը, սակայն, ինքը էապէս շատ դժբաղդ է, որովհետև նա թողնում է իր տունն ու տեղը սափրված այն նեղ և ծանր տնտեսական վիճակից, որի մէջ գտնվում է նրա կեանքը մայրենի գիւղում, իսկ յանձն առնելով բանուորի պաշտօն իր երկրից դուրս և համաձայնվելով էժան օրավարձով բանելու, նա ամեն կերպ զրկում է իրան, ուտում է շատ քիչ, հագնվում է շատ հասարակ կերպով, աշխատելով իր ծախքերը հասցնել նուազագոյն չափի, որպէս զի կարող լինի մի քանի կոպէկ յետ գցել իր գիւղական կարիքները հոգալու, իր հարկերը և տուրքերը վճարելու համար:

Այդպիսով մրցութեան մէջ ցոյց տուած աջողութիւնը, որ տեսնում ենք պարսկի մէջ, ամենևին ապացոյց չէ նրա տնտեսական զարգացման, նրա կուլտուրական առաջադիմութեան ոյժի, այլ հետևանք է տնտեսական նեղ վիճակի, որ ստիպում է նրան ծախել իր աշխատանքը ինչին գնով, համաձայնել ամեն տեսակ ծանր պայմանների: Եւ երբ մի օր Պարսկաստանում կը սկսվի աւելի բարեկարգ տնտեսական կեանք, երբ պարսիկը կընդարձակի իր կենսական պահանջները և կարիք կը զգայ աւելի նուրբ պիտոյքներ ունենալու իր կեանքի մէջ, այն ժամանակ նա այլ ևս չի համաձայնի իրան ստրկացնել և ինչին վարձատրութեամբ իր կեանքի մեծագոյն մասը անցկացնել տաժանակիր աշխատանքների մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

VIII

«Մշակի» 145 համարում տպված յօդուածս մեր թեմական դպրոցների մասին՝ տեղիք է տուել թիւրիմացութեան:

Մեզ մեղադրում են, որ մենք չափազանց մեծ նշանակութիւն ենք տալիս համալսարանականներին, «մի տեսակ բարձր արարածներ» ենք համարում նրանց:

«Մեր դպրոցներին, գրում է մեզ այդ մեղադրողներից մէկը, դեղ ու դարման կարող են լինել ոչ թէ նրանք, որոնք միայն համալսարանական են եւ ուրիշ ոչինչ, այլ թէ համալսարաններից եւ թէ ոչ համալսարանականներից բարեխիղճ եւ քիչ թէ չատ գաղափարական մարդիկ, իսկ այդպիսիները այժմ համալսարանականների մէջ աւելի քիչ են, քան թէ հասարակութեան ուրիշ խաւերում: Եթէ համալսարանական Նահապետեանի ճեմարանին հասցրած բարոյական չարիքները վերածենք փողի, մի քանի միլիոնի կը հաւասարվի»:

Այնուհետեւ պ. Նամակագիրը թուում է մի չարք ուրիշ այդպիսի համալսարանականների անուններ (պ. Կ. Կոստանեան, բժ. Ս. Շահնազարեան, «որ բոլոր վերոյիշեալներին նսեմացրեց» եւ այլն) եւ խօսելով ներկայ ուսանողների եւ ուրեմն ապագայ համալսարանականների մասին, վերջացնում է.

«Մոսկվայի ուսանողութեան ահագին մեծամասնութիւնը տգէտ է, սահմանափակ եւ միանգամայն ազատ ամեն տեսակ բարոյական պարտաճանաչութիւնից, բայց մի եւ նոյն ժամանակ մեծ-մեծ յաւակնութիւններով, եւ դա ամենալաւ ուսանողութիւնն է համարվում»:

Պ. Նամակագիրը մասամբ լաւ չէ հասկացել մեզ: Մենք համալսարանականներին «բարձր արարածներ» համարողներից չենք: Հէնց նոյն յօդուածում մենք ասել ենք, որ եթէ մեր դպրոցները մտնեն ծառայելու այնպիսի համալսարաններ, որոնք «մարդաբեկորներ» են, ոչինչ չի դուրս գայ: «Մեծ բան չի դուրս գայ, եթէ այդ (համալսարանական) խնդրատուների մէջ նոյն իսկ գտնվի մի արժանաւոր անձնաւորութիւն... Անհրաժեշտ է մի ամբողջ հոսանք լուրջ, եռանդուն, գաղափարական համալսարանականների»:

Ուրեմն նրանց, որոնք «միմիայն համալսարանական են եւ աւել ոչինչ» մենք չենք յանձնարարում մեր դպրոցների համար: Գաղափարական համալսարանականների վերաբերմամբ տարաձայնութիւն չը կայ իմ եւ պ. Նամակագրի մէջ: Մնում են ուրեմն արժանաւոր, գաղափարական ոչ համալսարանականներ:

Որ շատ արժանաւոր մարդիկ եղել են եւ կարող են լինել ոչ համալսարանականների մէջ, այդ անկասկած է:

Սակայն նոյնքան անկասկած է, որ ով ուզում է արժանաւոր ուսուցիչներ ընտրել մի ջնակարգ դպրոցի (մանաւանդ բարձր դասարանների) համար, պէտք է եւ կարող է ընտրել գլխաւորապէս համալսարանականների մէջ եւ միայն բացառաբար՝ ոչ համալսարանականների մէջ:

Մենք դեռ առիթ կունենանք խօսելու այս հարցի մասին: Տ. Ե.

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

—

Օգոստոսի 10-ին

Այս տարվայ ցանքսերը, չնորհիւ մթնոլորտային շատ նպաստաւոր պայմանների, արտասովոր առատ բերք էին խոստանում: Սակայն յուլիսի վերջերից մինչեւ այժմ ամեն տեղ պարբերաբար իւրաքանչիւր օր տեղացող շատ յորդ եւ կարկտախառն անձրեւները ոչ միայն խանգարում են գիւղական աշխատանքների կանոնաւոր ընթացքին, այլ եւ ուղղակի թոյլ չեն տալիս, որ հացաբոյսերը հասնեն, եւ շատ տեղեր էլ ուղղակի խոնաւութիւնից հացաբոյսերի արժանները փչանում են: Կարսի նահանգի մի քանի աւելի տաք կլիմայ ունեցող մասերում արդէն քաղը վերջանալու վրա է, իսկ մեծ մասում դեռ եւս գարու քաղը հաղիւ սկսվել է. եթէ մի երկու շաբաթ էլ այսպիսի անձրեւային եղանակներ շարունակվեն, այն ժամանակ այն յոյսերը, որ ունէինք առատութեան մասին, ի դերեւ կելնեն:

Ինչպէս գրում է տեղական «Карсъ» շաբաթաթերթը, կարկուտը ոչնչացրել է հետեւեալ գիւղերի ցանքսերի եւ բանջարանոցների մի մասը,—Զարուշատի գաւառակում՝ Գրենադերակի, Նօվօ-Պօկրովկա, Մալօ-Վօրոնցօվկա, Օլշանկա, Նօվօ-Դուբօվկա, Աղզի-Աչխ, Գիօզարչին, Կարակեկել, Մամաչ, Բենդեւան, Զանազա, Զադարա եւ Նօվօ-Պետրովկա (երկրորդ անգամ),—եւ վնասը յիշեալ գիւղերում հասնում է մօտ 32 հազար բուբլու. բացի սրանից, յուլիսի 28-ին, Կարս գաւառի Պրօխլադնի գիւղում տեղացող կէս ձուի մեծութեամբ կարկուտը ոչնչացրել է բանջարանոցների մեծ մասը եւ հացի էլ փոքր մասը եւ վնասը հասնում է մօտ 12 հազար բուբլու: Այսպէս, ուրեմն, մինչեւ օգոստոսի մէկը կարկուտը Կարսի նահանգում վնասել է մօտ 45 հազար բուբլու հացաբոյսեր եւ բանջարեղէններ: Այդ վնասը սակայն չի ունենայ առանձին նշանակութիւն, եթէ անձրեւային եղանակները դադարեն եւ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՅՍՊԷՍ ԷՐ ԽՕՍՈՒՄ ԶՐԱԴԱՇՏԸ

ԶՐԱԴԱՇՏԻ ՔԱՐՈԶՆԵՐԸ

Երեք կերպարանափոխութիւնների մասին

—

Ես խօսում եմ ձեզ ոգու այսպիսի երեք կերպարանափոխութիւնների մասին,—թէ ինչպէս ոգին դառնում է ուղտ, յետոյ ուղտից առիւծ եւ վերջապէս առիւծից՝ մանուկ:

(Այս գլխում, որքան ես հասկանում եմ, Նիցշէ այլաբանօրէն իրար հակադրում է բարոյագիտութեան երեք շրջաններ:—Առաջին շրջան, որի իդէալն է ճգնաւորութիւնը,—«ուղտի» շրջան: Այդ շրջանում մարդկային ոգին ուժեղ է, տոկուն եւ երկիւղածութեան ընդունակ):

Ի՞նչ կայ ծանր,—այսպէս է հարցնում տոկուն ոգին եւ, չոքելով ուղտի նման, ուզում է լաւ բեռնված լինել (ամենածանր պարտականութիւններով).....Ահա այդ բոլոր ամենածանր բաները շալակում է տոկուն ոգին, եւ դէպի անապատ շտապող բարձած ուղտի նման՝ ինքն էլ շտապում է իր անապատը:

(Երկրորդ, անցողական շրջան, երբ մարդկային ոգին աշխատում է թօթափել իր շալակից պարտականութիւնների բեռը, աշխատում է ազատվել զանազան կապանքներից,—«առիւծի» շրջան: Առիւծ կտրած ոգին կռիւ է մղում «մեծ վիշապի» հետ, որի անունն է «Դու պարտական ես»: «Առիւծ» ոգին պնդում է՝ «Ես կամենում եմ»: «Մեծ վիշապի» խորխի վրա ոսկետառ փայլում են հազարամեայ արժէքոյցները,—բարոյական սկզբունքները: Նոր արժէքոյցներ, բարոյական նոր սկզբունքներ ստեղծել՝ վեր է «առիւծի» ոյժից: Նրա դերը ուրիշ է,—ազատութիւն ձեռք բերել մարդկային ոգու համար, կտրատել հին բարոյագիտութեան կապանքները, ազատ պայմաններ ստեղծել ապագայ ազատ բարոյագիտութեան համար:—Մեր կարծիքով, այդպիսի «առիւծային» դեր էր ուզում կատարել Նիցշէ, շնչելով գլխաւորապէս իր բարոյագիտութեան բացասական, կործանիչ կողմերը, որոնք առիթ էին տալիս շատերին կարծելու, թէ Նիցշէ ամենևին չէ ընդունում բարոյականութիւն: Ոչ, Նիցշէ ընդունում է բարոյական իդէալ,—ապագայ գերմարդու անգիտակից, մանկական, անմեղ, ազատ բարոյականութիւնը: Մարդ պէտք է ձգտէ հասնել սերունդների ընթացքում բարոյական այդ աստիճանին: Այդ է անցողական շրջանի նպատակը, որի համար ամեն միջոց թոյլատրելի է համարում Նիցշէ,—դրանումն է նրա վարդապետութեան թոյլ կողմը, աքիլէսեան կրունկը, եւ դրա շնորհիւ է, որ զանազան դէկադէնտներ իրանց վարդապետ էին ուզում համարել Նիցշէին, կարծելով, թէ նա քարոզում է բարոյական անիշխանութիւն, բարոյական սանձարձակութիւն յանուն սանձարձակութեան: Թէ որքան հեռու էր այդ Նիցշէի իսկական մտքերից, երեւում է նրանից, որ նա իր բացասական վերաբերմունքը դէպի ընդունված բարոյականութիւնը անուանում է «սուրբ բացասումն նոյն իսկ պարտականութեան»):

Որպէս զի կարելի լինի ստեղծել ազատութիւն եւ սուրբ բացասումն նոյն իսկ պարտականութեան—առիւծի ոյժ է հարկաւոր դրա համար, եղբայրներ:

(Երրորդ շրջանում ոգին հասնում է իր նպատակին: Առիւծը յաղթում է մեծ վիշապին: Կռիւը վերջանում է: Հին արժէքոյցները, հին բարոյական սկզբունքները ջախջախված են: Գալիս է նոր բարոյական սկզբունքների ժամանակը: Ոգին դառնում է մանուկ. չինծու բարոյականութեան տեղ տիրում է բնականը: Չը կայ կռիւ պարտականութիւնների եւ կրքերի մէջ, չը կայ ճնշումն բնական հակումների, չը կայ փարիսեցիութիւն, ամեն ինչ կատարվում է անմեղ բնազդների համաձայն. մարդու կեանքը դառնում է անբռնազբօսիկ, ազատ եւ անցնում է իբրեւ խաղ ու պար):

Բայց կասէք, եղբայրներ, ինչ կարող է անել մանուկը, որ չը կարողանար անել առիւծը: Ինչու՞ գիշատիչ առիւծը պէտք է մանուկ դառնայ:

Անմեղութիւն է մանուկը, մոռացումն, նոր սկզբունք, խաղ, ինքն իրան գլորվող անիւ, առաջին մղումն,—արտասանված սուրբ «այո»: Այո, եղբայրներ, ստեղծագործող խաղի համար հարկաւոր է սուրբ հնարաւորութիւն «այո» ասելու,—իրան կամքին է հպատակ մարդկային ոգին, իր աշխարհն է նուաճում նորից (ոգին), (այն աշխարհը) որ առաջ կորցրել էր:

Երեք կերպարանափոխութիւն նկարագրեցի ձեզ,—թէ ինչպէս ոգին առաջ դարձաւ ուղտ, յետոյ ուղտից առիւծ եւ, վերջապէս, առիւծից՝ մանուկ:

Այսպէս էր խօսում Զրադաշտը: Այս անգամ նա իջեւանեց մի քաղաքում, որի անունն էր «Խայտպտուն (չալ) կով»:

Առաքինութեան ամբիոնների մասին:

—

(Այդ քաղաքում հռչակված էր մի իմաստուն, որին շատ յարգում էին ամենքը եւ առատ վարձատրում, որովհետեւ շատ լաւ խօսել գիտէր քնի եւ առաքինութեան մասին: Զրադաշտը գնում է նրան լսելու):

Ահա ինչ էր ասում այդ իմաստունը (որ կենսական իմաստութեան, ընդունված բարոյագիտութեան, չափաւորութեան քարոզիչ է):

«Փառք եւ պատիւ տուէք քնին: Այդ առաջին բանն է...

(Մարդ պէտք է զսպէ իրան, առաքինի լինի, որ կարողանայ հանգիստ քնել):

Հաշտ ապրիր աստուածութեան եւ հարեւանդ հետ,—այդ է պահանջում լաւ քունը: Հաշտ ապրիր նոյնպէս եւ հարեւանդ շուոտի (домовой, տանու սատանայ) հետ,—թէ չէ նա էլ կանհանգստացնէ քեզ գիշերը:

Հպատակվիր եւ յարգիր իշխանաւորներին, նոյն իսկ անարդար իշխանաւորներին: Այդ է պահանջում լաւ քունը...

Ես չեմ ուզում ոչ չափազանց մեծ պատիւներ, ոչ ահագին հարստութիւններ,—թէ մէկը, թէ միւսը վնաս են փայծախին: Սակայն առանց բարի անուան եւ անհրաժեշտ հարստու-

գիւղական աշխատանքները կանոնաւոր ընթանան։

Զը նայելով, որ նոր ցորենը դեռ շատ քիչ տեղերում է դուրս եկել, հացի գինը այնուամենայնիւ պակասեց։ Այժմ թխած հացը ծախվում է ֆունտը 3 կոպէկ. բայց այդ տեղացի հացթուխների կամքովը չէ, դրա համար այնպիսի կիսաեփ խմոր հաց են թխում, որ ուտել չէ լինում. դեռ օգտվելով տեղական կարգադրիչների անուշադրութիւնից, իրանց թոյլ են տալիս հացի հետ խառնել եւ այնպիսի նիւթեր, որոնք վնասակար են մարդուս համար։ Պակասացրել են եւ մսի սակագինը. այժմ ֆունտը ծախվում է 5 կոպէկի, բայց դարձեալ մսագործները դժգոհ են եւ նշանակած գնից աւել են առնում. մորթած մսերն էլ մեծ մասամբ այծի միս է։

Տեղիս գրադարան-ընթերցարանը դեռ շարունակում է իր գոյութիւնը, բայց նա դեռ եւս ոչ հաստատված կանոնադրութիւն ունի եւ ոչ էլ մասնաժողովի անդամներն են հաստատված իրանց պաշտօնում։ Պաշտօնական թղթերը գտնվում են նահանգապետի դիւանատանը եւ օրից օր սպասում են հաստատութեան։ Այսպիսի անորոշ պայմաններում, ի հարկէ, բոլորովին անտեղի է պահանջել այն՝ ինչ որ չեշտել էր պ. Նոհրատեանցը «Մշակի» մէջ գրած նամակում. ընդհակառակը, մասնաժողովը արել է աւելի, քան կարելի էր այդպիսի պայմաններում անել։ Իսկ ինչ վերաբերում է գրադարանապետի «գօվերնօստով» պաշտօնը ուրիշին յանձնելուն եւ ուրիշ գործով զբաղվելուն, դա ուղղակի անճիշդ, հնարված տեղեկութիւն է։ Իրողութիւնը այս է, որ գրադարանապետը գրաւոր հրաժարական է տուել յանձնաժողովին եւ այնպէս թողել պաշտօնը. իսկ յանձնաժողովը իր կողմից առաջարկել է ուսուցիչ պ. Տէր-Խաչատրեանցին ժամանակաւոր կերպով կառավարել գրադարանը, մինչեւ պաշտօնական թղթերի ստացվելը։

Վանանդեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բարալէթ գիւղ, օգոստոսի 5-ին

Ամիս ու կէս սրանից առաջ, երբ ես նոր էի եկել Ախալքալաքի գաւառը չինութիւնների վրա հսկելու համար, գիւղացու աղաչանքներից ու պաղատանքներից հանգստութիւն չունէի. որ կողմը ուղղէիր ականջդ՝ լսվում էր գիւղացու ձայնը՝ «աղա, երբ պիտի մեր տները չինես, աւերվեցինք, աղա, մնացել ենք անտուն, շուտ արէք, ամիս մէ մնացել, մեր վատ ժամանակը կը դայ, էլ ոչինչ չենք կարողանայ անել, ձմեռը որտեղ պէտք է ապրենք»։

Հազիւ կարողացանք Ախալքալաքի պ. գաւառապետի հետ շրջել Վնասված գիւղերը, հազիւ կարողացանք հետազօտել Վնասված չինութիւնները, տեղեր ընտրել մի քանի գիւղերի տեղափոխութեան համար, հազիւ կարողացանք գիւղական համայնքին համոզել վճիռ կայացնել գիւղի տեղափոխութեան մասին,—հասաւ այն րօպէն, երբ գիւղացին անկարող է ոչ քլունդը ձեռքը վերցնել, ոչ էլ քար-քարի դնել։

Թէ որչափ ցանկալի էր գիւղացու համար նոր տուն ունենալը, դրա ապացոյցն այն է, որ Բեժանօ, Մերենիա, Բալիս եւ Դրգնա գիւղերի բնակիչները անմիջապէս ներկայացրին պ. գաւառապետին իրանց գիւղերի տեղափոխելու վճիռները, տալով դրա համար իրանց սակաւաթիւ «ախպիներին»—«նպաստուզարներին», այսինքն պարարտացրած հողերի վերջին կտորները։ Կարծէք ամեն ինչ նախապատրաստված էր եւ մնում էր միայն սկսել գործը։ Այժմ Բեժանօ, Մերենիա եւ Դրգնա գիւղերում ձգած են մի քանի պլաններ, բայց գիւղացիները նոյն իսկ հիմքի համար հորեր դեռ չեն փորել, կարծէք գիւղացին մոռացութեան է տուել այն անհերքելի փաստը, որ վաղը կամ միւս օրը ձմեռը պիտի պատէ նրան, եւ նա պէտք է մնայ ձիւնի տակ։ Եւ ինչ անէ խեղճ գիւղացին, գլուխը որ քարին տայ կամ որ քարը գլխին տայ. հազիւ ամառը սկսվել է, խոտերը հասել են, մի քանի շաբաթ է մնում մինչեւ ցրտի եւ սառնամանիքի սկսվելը, չէ որ այս կարճ ժամանակամիջոցում նա պէտք է իր խոտը քաղէ. որպէս զի նրա եզը կամ կովը ձմեռը առանց պաշարի չը մնայ. իր մասին նա քիչ է մտածում, որովհետեւ սովորել է միշտ քաղցած մնալ եւ քաղցած էլ կը մնայ. նա ասում է. «ես ցրտին ու քաղցին կարող եմ դիմանալ, իսկ մալս (տաւարս) ոչ»։

Ընթերցողին միանգամայն հասկանալի կը լինի գիւղացու այդ տրամաբանութիւնը, եթէ ի նկատի ունենանք, որ երկրաշարժից Վնասված տեղերում հողերի սարսափելի պակասութիւն է, եւ որ նոյն գիւղացին չը բաւականանալով իր գիւղի սահմանի մէջ ունեցած հողերով, 15—20 վերստ հեռաւորութեան վրա գընում կապալով խոտ է վերցնում հնձելու։

Ահա, յարգելի ընթերցող, այն տիրալի դրութիւնը, որի մէջ է այսօր գիւղացին. թող այս տողերը ուշադրութեամբ կարդան այն օպտիմիստները, որոնք ասել են, թէ Ախալքալաքի գաւառի գիւղացին նոյն իսկ գոհ պիտի լինի, որ բնութիւնը նրան պատժել է, քանի որ նա այժմ լաւ կապրէ, քան երկրաշարժից առաջ։

Աւելորդ եմ համարում բերել այստեղ այն հոգեկան զրկանքները, որ կրել է ժողովուրդը երկրաշարժի աղէտից, դա արդէն յայտնի է հասարակութեանը եւ, բացի այդ, գիւղացին կարծէք իրաւունք էլ չունի հոգեկան զրկանքների մասին մտածելու, որովհետեւ այլ եւս նա մարդու հաշուում չէ, նա կատարեալ դրաստ է դարձել։

Այս փաստերից յետոյ կարելի է ասել, թէ գիւղացին անտարբեր է. մարդ իր գլուխը մոռացութեան տուած անասունի մասին մտածէ, արդեօք սա անտարբերութիւն է։ Կարծում եմ, որ այս բոլորից յետոյ հասկանալի է ընթերցողին գործերի ընթացման դանդաղութեան պատճառը։

Գանք այժմ այն թղթակցութեան, որ տպված էր «Кавказъ»-ի № 196-ում եւ որը արտատպել է «Մշակը» № 138-ում. պ. թղթակիցը բացարձակ յայտնում է հասարակութեանը. թէ մերենիացիները յայտարարում են՝ «մեզ հարկաւոր չեն ձեր տները, չենք ուզում քար կրել, փայտեղէն բերել, չենք ուզում աշխատել, եթէ կամենում էք, ինքներդ չինեցէք. կամ թէ փողը մեզ տուէք, եւ մենք չինութիւններ կը կառուցանենք այնպէս, ինչպէս մեզ է ցանկալի»։ Թէ որտեղից են հասել այդպիսի լուրերը պ. Թղթակցին, այդ միայն Ալլահը գիտէ. այսքանը կարող եմ միայն ասել, որ եթէ մի որ եւ է գիւղացի մի այդպիսի յայտարարութիւն անելու մտադրութիւն ունենար, առաջինը ես պէտք է լսէի այդ յայտարարութիւնը, որովհետեւ միակ մարդը ես եմ, որ անմիջապէս գործ ունեմ գիւղացու հետ համարեա ամեն օր, ամեն ժամ եւ ամեն րոպէ։ Եղան, այո, 3—4 մարդ ամբողջ Մերենիա գիւղից, որոնք համարեա ոչ մի վնաս չեն կրել երկրաշարժից, բաւական ունեւոր մարդիկ են, եւ չուզենալով ընդհանուր զալմազալի մէջ ընկնել՝ քարոզում են ժողովրդին՝ «աղոնք ձեր տները աւերվում են եկել, գուք աղոնց ականջ միք դնի». ահա այդ 3—4 մարդիկն էին, որ եկան եւ յայտարարեցին, թէ չեն ուզում ոչ կոմիտէտի չինութիւնը, ոչ էլ նրա օգնութիւնը։ Այդ մասին խոկոյն «актъ» կազմեցի եւ ուղարկեցի պ. գաւառապետին, չեշտելով այդ անձանց ազգանունները, որպէս զի կոմիտէտը ի նկատի ունենայ, որ ամեն մի մթնոլորտում կան հատ ու կտոր մարդիկ, որոնք խառնում են ամեն ինչ։ Իսկ ինչ վերաբերում է ամբողջ ժողովրդին, վերջինս շատ եւ շատ է ուզում մեր կառուցանել, բայց արդէն ուշ է. ձմեռը գիւղացին կարող է եօլա գնալ, 5 կամ 10 բուբլով նա կարող է մի ուրիշ գիւղում տուն վարձել, սակայն առանց ուտելիքի, առանց պաշարի նա կարող չէ երբէք մնալ։ Ահա ինչից է առաջանում այն տխրալի փաստը, որի մասին գրում է «Кавказъ»-ի պ. թղթակիցը։

Ցանկալի է, ի հարկէ, շուտափոյթ տեղեկութիւններ տալ հասարակութեանը մամուլի միջոցով ամեն մի աչքի ընկնող հասարակական գործի մասին, սակայն, մի քիչ խորը չը մտածելով աղաւաղել փաստերը եւ մեղադրել խեղճ գիւղացուն ու ամբողջ հասարակութիւնը անտարբերութեան մէջ, լուն ուղղ դարձնել, դա անարդարութիւն է եւ միանգամայն լրագրական էտիկայի դէմ բան է։

Եթէ ամբոխը միանգամայն նուիրված չէ չինութիւնների գործին, դրա պատճառը այն է, որ գործը սկսված է վերին աստիճանի ուշ եւ գիւղացու ամենամամ ժամանակը. գիւղացին, կուզէք սպանեցէք նրան, չէ կարող զոհել իր դաշտային աշխատանքը չինութեան գործին։

Խնդրում եմ միւս թերթերին արտատպել այս թղթակցութիւնը։

Ճարտարապետ՝ Յովհաննէր Խիզանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շուշի, օգոստոսի 6-ին

Ձեր թերթի № 138-ում լուրերի բաժնում կարդացի Էսսէնտուկիից մի լուր, ուր ասված է, որ անցեալ յունիսի 29-ին այնտեղ տեղի է ունեցել մի ներկայացում, ուր ի միջի այլ պիէսաների ներկայացրել են եւ «Քիթը հուպ տալ» վոդեվիլը, ղեկավարութեամբ օր.օր. Մ. եւ Վ. Լազարեանների եւ պ. Միք. Յովհաննիսեանցի։ Որովհետեւ այդ վոդեվիլը իմ հեղինակութիւնն է եւ տակաւին ձեռագիր է եւ վերոյիշեալ պարոնին եւ յարգելի օրիորդներին ոչ ծանօթ եմ եւ ոչ ճանաչում եմ, ուստի ցանկալի էր, որ նրանք մի փոքրիկ բացատրութիւն տային, թէ որտեղից են ձեռք բերել իմ հեղինակութիւնը եւ ով իրաւունք տուեց ներկայացնելու իմ այդ ձեռագիրը, քանի որ ձեռագրի մէջ ասված է, որ ներկայացման իրաւունքը վերապահված է։

Խնդրում ենք բացատրութիւն։

Ղ. Ա. Խաչատրեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ախալքալաք, օգոստոսի 8-ին *)։

Պարոն Սալուստեանն Մշակի № 124 մէջ ինձ վրայ զանազան զրպարտութիւններ եւ պոչով սուտեր գրում էր, որու վրայ կարճառօտ ուզում եմ բացատրել պ. պ. ընթերցողաց նորայ սուտ զրպարտութիւնները։

Ա. Նա ասում է, որպէս թէ՝ Խզաբաւրայու Նորաշէն եկեղեցւոյ օծման՝ ես մերձակայ հայ եղբայրներից, որպէս զրացիք՝ չեմ հրաւիրած, չատ զարմանալի!! չատ մեծ պոչով սուտ!!! Որովհետեւ՝ ես Ախալքալաքից ինչպէս հրաւիրած էի թ'է պ. Ուեղնի Նաչալնիկին, թ'է հուսագրատան Նաչալնիկին պ. Աղասիկովին, պ. Միրզոյի Սուղիային, Կաղնաչէին, քաղաքի Ինսպեքտորին եւ ռուսաց քահանայ պ. Զիտաձէին եւ այլոց. այնպէս էլ մեր հայ զրացիներից հրաւիրած էի, խօսքիս հաստատութեան համար՝ նոցա անունները ալ կըյիշեմ—հայոց գործակալ բարձրապատիւ Քաջազունին պ. Հայրապետովին, պ. Հասրաթովին, պ. Սահաթջովին երկու եղբարց, պ. պ. Դարբինովներին ես եւ այլոց։

Բ. Նա ասում է որպէս թէ՝ մեր եկեղեցին 12,000 մանեթով չինուած է եւ այս փողերը հայ-կաթոլիկ գիւղերից եմ հաւաքեր. իմ եկեղեցիս ոչ թէ 12,000 մանեթով է չինուած այլ՝ ընդամեն հաշուելով թ'է խզաբաւրայու աշխատանք, թէ իմ հաւաքածներս՝ բացի միջի չինուածներից եւ միջի զարդերից եւ եկեղեցական մեներից՝ մեզ նստած է 30,000 բուբլի 5,000 բուբլի խորանների եւ միջի զարդերը նստած է մեզ, 3000 բուբլի ալ եկեղեցական մեները, զորն որ երկու քահանային բնկարան է չինուած. եւ այս գումարի մէջ հայ-կաթոլիկների նուիրած փողը հազիւ 500 բուբլի կ'լինի առանց իմ գնալուս թէ՝ կանխիկ փողեր եւ թէ՝ ուրիշ եկեղեցական նիւթեր, ինչպէս որ պ. Աղեքսանդր Աղասիկովնալ եկեղեցւոյ օծման ժամանակ մեր եկեղեցուն նուիրեց մի Աւագ խորանի փառաւոր վարագոյր մը 120 մանեթի արժողութեան, իսկ միւս գումարները բոլոր հաւաքած եմ Հռոմէական կաթոլիկներից, նամանաւանդ՝ իմ ազգականներից, որն որ՝ իմ ազգականներս՝ ինչպէս պ. Ն. Ա. Սարայէվ, այնպէս էլ Ստեփան Իւանիչ Վարձելովն՝ Փիլիպպ Սիմոնիչ Փիլիպով՝ Դ. Ս. Գալուստով՝ եւ ուրիշները, այս իմ ազգականներս 2000 մանեթից աւելի ընծայած են խիզաբաւրայու եկեղեցւոյն. 1000 մանեթ էլ կայսերական Պալատից չնորհուած է մեզ յօգնութիւն։

Նա եւս ասում է թէ «3000 բուբլի պարաք ունի» բոլորովին սուտ։ Ես այդ պարտքեր տուած եմ միայն մնացած է մեզ 1200 բուբլի պարաք։ Պ. Սալուստեան ասումէ թէ՝ «ինչու համար յայտնի հաշիւ չէ տալի մեզ»։ Ես արդէն իմ հոգեւոր իշխաններուս ես անձամբս հրաւիրելով տուած եմ հաշիւներս թէ՝ հոգեւոր կառավարութեան եւ թէ՝ նորին սրբազնութեան Տիրասպօլուայ Եպիսկոպոսին։ Իսկ թէ որ մեր կաթոլիկները ուզում են նորից եկեղեցւոյ հաշիւներ, Մշակի մէջ տպել տալ կամ ուրիշ տեղ՝ թող մեր կաթոլիկներ պահանջեն, ես արդէն պատրաստ եմ, միայն՝ անանց համար որոնք որ՝ մասնակից են իրենց բարի սրտերից բղխած նուիրատուութեամբ Խզաբաւրայու եկեղեցւոյ չինութեան։ Ես չեմ պարտական պ. Սալուստեանցին հաշիւ տալու, քանի որ՝ նա իմ կրօնակիցս չէ եւ ոչ էլ ազգակիցս, մինչեւ անդ։

*) Տպագրում ենք այս նամակը անփոփոխ, տառացի ճշդութեամբ։

թեան էլ վատ է լինում մարդուս քունը։

Սիրելի են ինձ եւ հոգով աղքատները,—նրանք նպաստում են քնին...»

...Լսելով իմաստունի այդ խօսքերը, Զրադաշտը ծիծաղեց իր սրտում... եւ այսպէս ասաց ինքն իրան.

«Տխմար է թեւում ինձ այս իմաստունը... բայց հաւատում եմ, որ նա լաւ գիտէ քնել, անշուշտ...

...Երանի այդ քնկոտներին, որովհետեւ նրանք քնելու են շուտով։

Այսպէս էր խօսում Զրադաշտը։

Ուրիշ աշխարհ երազողների մասին։

—

...Մի ոտիւնով ամեն բանի հասնել ցանկացող յոգնածութիւնը,—անգիտութեան խեղճ յոգնածութիւնը, որ չէ ցանկանում այլ եւս կամենալ (որ թուլամորթ է, այժ չունի կուելու յանուն մարդուս կատարելագործութեան եւ յոյս չունի, որ իդէալը կարող է իրագործվել այս աշխարհում),—այդ յոգնածութիւնն է ստեղծել բոլոր նախկին ասուածներին եւ բոլոր այլ աշխարհի մասին երազողներին։

...Նոր հպարտութիւն սովորեցրեց ինձ իմ «եսը», եւ այդ հպարտութիւնն եմ սովորեցնում ես մարդկանց,—չը թագցնել այլ եւս գլուխը երկնային վերացականութիւնների աւազի մէջ, այլ հպարտ պահել այդ գլուխը, որ իմաստ է ստեղծում երկրի համար։

Նոր կամք եմ սովորեցնում ես մարդկանց,—գնալ այն ճանապարհով, որով գնում էր (առաջ) մարդս անգիտակցաբար, եւ անուանել այդ ճանապարհը լաւ ճանապարհ. եւ այլ եւս չը շեղվել նրանից, որ վայել է միայն տկարներին եւ մեռնելացուներին։

...Ներողամիտ է Զրադաշտը դէպի տկարները։ Իրաւ եմ ասում, չէ բարկանում նա նրանց մխիթարութեան միջոցների վրա եւ նրանց ապերախտութեան վրա (դէպի իրանց մարմինը եւ դէպի երկիրը)։ Թող նրանք առողջացողներ լինեն եւ յաղթողներ, եւ թող աւելի բարձր մարմին ստեղծեն նրանք իրանց համար։

...Լաւ է լսէք, եղբայրներ, առողջ մարմնի ձայնին,—այդ ձայնը աւելի ճշմարտախօս է եւ աւելի մաքուր։

Աւելի ճշմարտախօս է եւ աւելի մաքուր՝ առողջ մարմինը,—եւ նա խօսում է երկրային կեանքի իմաստի մասին։

Այսպէս էր խօսում Զրադաշտը։

Մարմինը ատողների մասին

—

(Նիցշէ ի չարն է գործ դնում գրելու առարկային եւ այլաբանական ոճը եւ կարծէք նոյն իսկ կոկէտութիւն է անում այդ ոճով։ Այդ շատ դժուարըմբռնելի է դարձնում նրա գրածը։ Մեծ անյարմարութիւն է մեզ համար եւ այն, որ ձեռքի տակ ունենք ոչ թէ բնագիրը, այլ ռուսերէն թարգմանութիւնը։—Այս գլխում Նիցշէ հակադրում է մարմինը հոգուն եւ պնդում է, թէ մարդուս մէջ մարմինն է գերիշխողը։ Մարմին ասելով, Նիցշէ, մեր կարծիքով, ուզում է հասկանալ մարդկային օրգանիզմի բնազդական ձգտումը կատարելագործվելու, ապրելու, աճելու, մի խօսքով կամքը, այդ բառի Շոպէնհաուէրեան իմաստով։ Նիցշէ մի ժամանակ ենթարկվել է Շոպէնհաուէրի փիլիսոփայութեան խոր ազդեցութեան։ Ինչպէս յայտնի է, ըստ Շոպէնհաուէրի, ամենաէականը, նախնականը, հիմնականը մարդուս եւ ամբողջ տիեզերքի մէջ կամքն է, գիտակցական եւ անգիտակցական, եւ ոչ թէ բանականութիւնը, ինչպէս պնդում են բացիօնալիստները, Դեկարտ, Սպինոզա, Լէյբնից, Հեգել եւ այլն։ Բանականութիւնը նախնական երեւոյթ չէ, այլ արտադրված, եւ ինքնապաշտպանութեան մի միջոց է, մի գործիք կամքի ձեռքին, ամենաազդու միջոցը, ամենակատարեալ գործիքը։ Մարդուս մարմինը կամքի արտադրութիւն է, նոյն իսկ կամքն է երեւոյթ դարձած։ Կամքը կամք է՝ լինի նա գիտակցական (կամք, բառի գործածական նշանակութեամբ), թէ անգիտակցական—բոյսերի եւ նոյն իսկ անօրգանական մարմինների մէջ (քար, մետաղ եւ այլն)։ Բոյսի աճումը անգիտակցական կամքի արտայայտութիւն է։ Ծառի կատարը ձգտում է շարունակ աճել ուղղահայեաց դիրքով, լոյս է ուզում։ Արմատը խոնաւութիւն է ուզում։ Մագնիսի սլաքը միշտ ուղղվում է դէպի հիւսիս։ Բոլոր մարմինները ընկնում են դէպի ներքեւ եւ այլն։ Տիեզերավար կամքի արտայայտութեան ստորին, տարրական աստիճաններն են՝ ծանրականութիւն, առաձգականութիւն, էլէքտրականութիւն, մագնիսականութիւն, քիմիական խնամէութիւն եւ այլն։ Կամքի բարձր աստիճանները արտայայտվում են օրգանական աշխարհում եւ հասնում են իրանց գագաթնակէտին մարդուս մէջ։ Կամքի ամեն մի աստիճան կուում է միւս աստիճանի հետ եւ դրանից է առաջանում այն գոյութեան կռիւը, որ յատուկ է բնութեան։ Աշխարհիս հիմնական սկզբունքը «ապրելու կամքն է»։—Շոպէնհաուէրի այն միտքը, թէ մարդուս մարմինը նոյն իսկ կամքն է, որ դարձել է երեւոյթ, մարդուս ապրելու ցանկութիւնն է, որ դարձել է տեսանելի, այդ ցանկութեան, այդ կամքի արտադրութիւնն է, ցուցարարը եւ, այսպէս ասած, մարմնացումը, իսկ բանականութիւնը՝ այդ կամքի գործիքը։ Նիցշէ արտայայտում է հետեւեալ խօսքերով).

Մարմինը (քո) մեծ բանականութիւնն է (կամք, ըստ Շոպէնհաուէրի)...

Քո մարմնի գործիքն է, եղբայր, քո փոքր բանականութիւնը, եւ մեծ բանականութեան (այսինքն մարմնի) այդ խաղալիքը (փոքր բանականութիւնը, ըստ Նիցշէի,—պարզօրէն բանականութիւնը, ըստ Շոպէնհաուէրի) դու անուանում ես հոգի։

(Մարմինը ատողները, մարմինը ճնշել քարոզողները նրանք են, ըստ Նիցշէի, որոնց մարմինը թէեւ շատ ցանկանում է կատարելագործվել, «ստեղծել իրանից դէնը», այսինքն իրանից աւելի բարձր մի մարմին, բայց այդ նրա ուժից վեր է, ուստի եւ նա ցանկանում է ոչնչանալ)։

...Զեմ գնում ձեր ճանապարհով, դուք, մարմնատեացներ։ Դուք ինձ համար՝ դէպի գերմարդը տանող կամուրջներ չէք։

Այսպէս էր խօսում Զրադաշտը։

(Կը շարունակվի)

գամ իրեն ըստ օրինի չի պատկանի որ մեր գործքերի մէջ նա խառնուի։

Ինչ որ վերաբերի այն «Ռուսական պարոններին» որպէս թէ՝ այն պարոնները ուզում էին քահանայ դառնալ ես չեմ թողնում՝ միայն այդ ստոյգ է, որովհետեւ՝ կաթողիկէ եկեղեցին՝ կրօնի մէջ գաղջացած մարդկանց չի ընդուներ քահանայութեան, նա մանաւանդ անոնց՝ (ինչպէս մեր ուսեալներ) որոնք որ տարին միանգամ հաղիւ եկեղեցին կը մտնին եւ խոստովանանքի խորհուրդին որ ամենեքին չեն մօտենում։ Այնպիսի մարդկանց ի խղճէ պարտաւորեալ չէ կարելի թողնել քահանայութեան, թէ կարողանամ ոչ թէ քահանայութեան միայն չեմ թողներ՝ այլ ես ոչ ուսուցչութեան, որովհետեւ՝ մատաղատունք մանուկներ ինչ պէտք է սովորին այդպիսիներից՝ որոնք որ իրենք իրենց կրօնի կարգ ու պատիւ չեն գիտեր։

Յարգելի ընթերցողներ։ Պ. Սալոմեան իրանից չէր պարտաւորուած ինձ վրայ այս՝ եւ ուրիշ զրպարտութիւններ գրելու քանի որ՝ նա խիստ լաւ է ճանաչում զիս. այս պարոն ուսեալներից ստիպեալ՝ որոնց որ իբրթէ ես չեմ թողնում քահանայանալու. ինչու որ իրանք եղած են տիկ եւ պ. Սալոմեանցին ըրած են զուրնայ։ Ասոր համար միւս բաներուն բացատրութիւն տալ աւելորդ կը համարիմ, որովհետեւ՝ Սալոմեանցին գրած բաները իմ վրա զրպարտութիւն է եւ ուրիշ ոչինչ, ինչպէս վեր տեսնուեցաւ։

Աւագ-քահանայ Հայ-կաթոլիկաց եկեղեցեաց Ախալքալակայ սամանի նա ես վերակացու Խզաբաւրոյ գիւղի եկեղեցւոյ Միխայէլ Վարձելաշվիլի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, օգոստոսի 18-ին, ութամսեայ դադարումից յետոյ սկսեց Նորից լոյս տեսնել «Новое Обозрѣніе» լրագիրը։ Վերսկսումից յետոյ տպված առաջին համարը բաղկացած է մեծ մասամբ ընդհանուր տեսութիւններից վերջին ութ ամսվայ ընթացքում տեղի ունեցած հասարակական, քաղաքական եւ գրական երեւոյթների։

—

Մեր ընթերցողներին յայտնի երիտասարդ կարապետ Գալֆայեան, որ գնացել էր Պարիզ դերասանութեան մէջ կատարելագործվելու եւ որ այնքան անաջող կերպով հանդէս դուրս եկաւ Պարիզի ֆրանսիական եւ հայ հասարակութեան առաջ Շէքսպիրի երկասիրութիւններից կտորներ ներկայացնելով, գնացել է Կ. Պոլիս ներկայացումներ տալու նպատակով։ Գալֆայեան դիտաւորութիւն ունի ներկայացնել Պոլսում «Համլէտ» եւ «Օթէլլո»։

—

Մոսկվայից հաղորդում են «Россія» լրագրին, թէ նորերումս վախճանված Գրիգոր Զանչեանի գերեզմանի վրա արձան դնելու նպատակով՝ մատաղութիւն կայ ստորագրութիւն բաց անել։

—

Մեզ հաղորդում են, որ թէյի մշակութիւնը Բաթումի նահանգում դառնում է իսկապէս լուրջ ձեռնարկութիւն։ Առաջիկայ ձմեռ այդ նահանգից կարտահանվի թէյ դէպի Ռուսաստանի ներքին վաճառականները։ Մոսկվայի մի քանի դրամատէրեր, որոնք առանձնապէս հետաքրքրվում են Բաթումի թէյի մշակութեամբ, նորերս գնացին հանգուցեալ Ա. Սօլվցովի կալուածքը, որտեղ առաջին անգամ մեծ դիրքով թէյի մշակութեան փորձեր արվեցին։

—

Տիկ. Լենեվսկայա, որ ֆարմացիայի մագիստրոսի քննութիւն է տուել եւ մատաղութիւն ունի մօտ օրերումս մագիստրոսական դիսերտացիա պաշտպանել, արտօնութիւն ստացաւ դեղատուն բանալու Պետերբուրգում։ Դա առաջին դեղատունը կը լինի Ռուսաստանում, որ թոյլ է տրվում բանալ կին-ֆարմացեվտի։

—

Մեզ հաղորդում են, որ հոգեհանգիստներ են կատարվել Գրիգոր Զանչեանի յիշատակին Ռաշտում (Պարսկաստան) եւ Թեմիրխանշուրայում։

—

Մօտ ժամանակներում մատաղութիւն կայ նոր տուրք առնել Ռուսաստանի բոլոր երկաթուղիներով ճանապարհորդողներից յօգուտ Կարմիր Խաչի ընկերութեան։ Ենթադրվում է իւրաքանչիւր տոմսակից վերցնել 5 կոպէկ։

—

Երկաթուղային մի քանի վարչութիւններ իրանց պարտաւոր չէին համարում վարձատրել այն բանուորներին եւ պաշտօնեաներին, որոնք վնասվում են երկաթուղիներում ծառայելու ժամանակ։ Կառավարչական սենատը նորերս բացատրեց, որ երկաթուղիները իրաւունք չունեն խուսափել այդ պարտաւորութիւնից, եթէ վնասվողը զրկանքներ է կրել երկաթուղուն վերաբերեալ պաշտօնավարութեան ժամանակ։

—

Ռուսաստանում գործող ապահովագրական ընկերութիւններից մէկը մտցրել է ապահովագրութեան նոր միւզ. նա ապահովագրում է մարդկանց այն գժբաղդ պատահարներից, որոնք տեղի կարող են ունենալ փողոցներում եւ հրապարակներում։ Ապահովագրութեան գումարների քանակութիւնը հասնում է մինչեւ 10—15 հազար ռուբլի։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Բորենին շարունակում է իր արշաւանքը եւ հասարեա ամեն գիշեր մի-մի զոհ է տանում չրջակայ գիւղերից, նոյն իսկ հասակաւորներից, որոնց թւում եղել են 40—50 տարեկան մարդիկ։ Պատմում են, որ շատ խելօք կենդանի է բորենին,—յարձակվելով զոհի վրա, նա անմիջապէս բռնում է նրա կոկորդից եւ այդպիսով ոչ թէ միայն թոյլ չէ տալիս ձայն հանել եւ օգնութեան կանչել, այլ այնպէս ամուր է սեղմում, որ զոհը ցաւից փաթաթվում է նրա վզովը։ Թէ գիւղացիները եւ թէ տեղական պահապան զինուորները երկու շաբաթ է, որ հրակում են գիշերները, որպէս զի սպանեն բորենուն, բայց իզուր»։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Վերջապէս նախկին երէցփոխ Ալէքսանդր Ամիրխանեանի երկար ձգձգվող գործն ընթացք ստացաւ։ Սղնախի գործակալը, հիմնվելով հաշուետեսների բանաւոր յայտարարութեան վրա, մի քանի օր առաջ զեկուցում տուեց Թիֆլիսի կօնսիստորիային, որ Ա. Ամիրխանեան յօժարակամ չէ ցանկանում հաշիւ տալ հաշուետեսներին, ուստի խնդրում է կօնսիստորիայի տնօրինութիւնը։ Ա. Ամիրխանեան, երկար տարիներ վարելով պաշտօն ս. Կարապետ մայր եկեղեցում, 1888 թ. հաշուետեսների քննութեամբ՝ պարտ մնաց եկեղեցուն 900 ր., որ չը վճարեց։ Անցաւ ժամանակ եւ Ա. Ամիրխանեան՝ շնորհիւ իր կուսակիցների՝ 1894 թ-ին դարձեալ ընտրվեց եւ հաստատվեց երէցփոխի պաշտօնում, չը նայելով որ իր պարտքը՝ 900 ր. դարձեալ չէր վճարել։ Այդ թւից նա պաշտօն էր վարում շարունակ հինգ տարի, երբ վերջապէս անցեալ տարի կարելի եղաւ աղայական ըէժիմը վերացնել եկեղեցուց։ Ուրեմն Ա. Ամիրխանեան պէտք է տայ հին պարտք 900 ր. եւ հինգ տարվայ հաշիւ. այդ հինգ տարվայ եկեղեցու մուտքը պէտք է լինի առնուազն 2,000 ր.»։

—

ՀԱՂԲԱՏԻՑ մեզ գրում են. «Մեր կողմերում դեռ շարունակվում է անձրեւը։ Գարնանը կարկուտը փչացրեց արտերի մի մասը։ Մնացած մասը վաղուց արդէն հնձել հաւաքել ենք կալի շուրջը, եւ ձեռքերը ծոցերս սպասում ենք, բայց մի լաւ օր չենք տեսնում. կալերը մնացել են առանց կալսելու եւ խուրձերն արդէն սկսել են ծլել։ Եթէ այսպէս մի քանի օր շարունակվի, մենք ամեն բանից կը զրկվենք, եւ պիտի փառք տանք երկրաշարժից վնասված ախալքալաքցիներին։ Միւս կողմից էլ կապոյտ հազ ասած հիւանդութիւնը ձեռք չէ քաշում մեր գիւղից։ Երեխաները մի քանի օր հիւանդ մնալուց յետոյ, մեռնում են։ Բժիշկ ասած բանն էլ մեր կողմերում գոյութիւն չունի. դրա փոխարէն հէքիմ ու մոլլաներ շատ կան»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Նորընտիր հոգաբարձուները հրաւիրեցին թեմական դպրոցի տեսչի պաշտօնով Բենիկ վարդապետին, որը, ի հարկէ, տուեց իր համաձայնութիւնը»։

—

ՋԻԲՐԱՑԷԼԻ գաւառից մեզ գրում են. «Բոժոժի բերքը այս տարի վատ չէր մեր գաւառում, թէեւ համեմատաբար քիչ անցեալ տարվանից։ Տերեւի հիւանդութիւն կար. տարին էլ անձրեւային էր։ Շերամապահութեամբ պարապվում են մեր գաւառում շատ գիւղեր, թէ հայ եւ թէ թուրք։ Լաւ տեսակի բոժոժը տալիս են հայերը, որոնք աւելի հմուտ են շերամապահութեան գործի մէջ։ Մեր գաւառում տարեկան ցրվում է մօտ 12 հազար արկղիկ գրէն, գլխաւորապէս Միհրան Խանճեանի պատրաստածից, եւ ստացվում է մօտ 20 հազար պուդ բոժոժ։ Հայերը տալիս են արկղիկին (25 գրամմ) միջին թւով 2 պուդ, իսկ թուրքերը 1 պուդ 20 ֆունտ բոժոժ։ Գիւղացիները գրէն ստանում են բոժոժի առեւտուրով պարապողներից զանազան պայմաններով։ Բոժոժի գինը այս տարի թուրքերի մօտ 9—12, իսկ հայերի մօտ 12—13 ր. էր պուդը»։

—

ԶԱՆԳԵԶՈՒՐԻՑ մեզ գրում են. «Ցունիս եւ յուլիս ամիսներին տեղացող անընդհատ անձրեւները առաջ բերեցին «ժանգ» հիւանդութիւնը, որը հէնց հասկերում փչացրեց հայահատիկները։ Գիւղացիներն իրանց եղած-չեղածը այսօր կալում են։ Նրանց կեղեքիչներն էլ քնած չեն այսպիսի յարմար ժամանակ. նրանք այժմ խուլ անկիւններում էժան գնով ժողովում են հայահատիկները եւ չտեմարանները լցնում այստեղ-այնտեղ, որպէս զի գարնանը քառապատիկ թանգ ծախեն հէնց նոյն գիւղացիների վրա, որոնցից այժմ չնչին գնով կամ պարտքերի տոկոսի տեղ են վերցնում։ Այդ բանը մնտեսապէս խիստ քայքայում է Զանգեզուրի գաւառի հիւսիս-արեւելեան եւ հիւսիս-արեւմտեան մասերում բնակվող երկրագործ ժողովրդին, որի եկամուտի զլխաւոր, նոյն իսկ միակ աղբիւրն է ցորենը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

—

Ցայսմի պատմաբան Մոմզէն «Nation» լրագրում տպագրել է մի յօդուած՝ «Ինչուէ եւ Սեղան» վերնագրով, որի մէջ դատապարտում է Գերմանիայի ձգտումը համաշխարհային առաջնակարգ պետութեան դեր խաղալու։ Գովելով կոմս Վալդերզէէյի զինուորական տաղանդը, Մոմզէն յոյս է յայտնում, որ նրա սուրը ոչ մի գործադրութիւն չի գտնի Չինաստանում։ «Գերմանիան զինուորական նոր դավինների կարիք չունի—ասում է Մոմզէն—քաղաքակրթված պետութիւնների համար միակ լուծելի խնդիրը Չինաստանում մի այնպիսի կառավարութեան կազմակերպութիւնն է, որ ընդունակ լինի բաւարարութիւն տալու իր սեփական հպատակների արդար պահանջներին եւ առելութեան զգացմունք չը զարթեցնէ դէպի օտարերկրացիները։ Իր յօդուածի վերջում մեծ պատմաբանը պաշտպանում է այն միտքը, թէ հարկաւոր է բոլորովին դադարեցնել 1870 թւականի յաղթութիւնների յիշատակին մինչեւ այժմ կատարվող տօնախմբութիւնները։ «Երբ յաղթութիւնների օրերը տօնվում են մեծ հանդէսով, նրանք արդելք են դառնում քաղաքակրթված ազգերի բնական մերձեցման», ասում է Մոմզէն։

«Kölniche Zeitung» ապացուցանում է, թէ պետութիւնները, չինացիներից պատերազմական ահագին տուգանք ստանալու հարկից ստիպված՝ պէտք է երկարատեւ ֆինանսական կօնտրոլ հաստատեն Չինաստանում, օրինակ այնպիսին, որպիսին գոյութիւն ունի այժմ Եգիպտոսում։ Բացի դրանից կառավարչական մեքենան կարգի բերելու համար՝ հարկաւոր կը լինի եւրոպական աստիճանաւորների մի մեծ քանակ ուղարկել Չինաստան եւ այդ աստիճանաւորների հսկողութեանն ենթարկել երկրի ներքին վարչութեան բոլոր մասերը։

Վիէննայի եւ Պետերբուրգի չինական դեսպան Եանգ-Իւ մօտ օրերումս մի նամակով դիմեց բարոն Ֆօն Սուտներին, խաղաղութեան գաղափարի յայտնի քարոզչին, որով նա ոչ միայն յայտնում է չինացիների ցանկութիւնը խաղաղութիւն կնքելու մասին, այլ եւ առաջ է բերում իր կարծիքները այն պատճառների վերաբերմամբ, որոնք գրգռում են չինացիների ատելութիւնը դէպի օտարերկրացիները։ Այն, ինչ որ ասում է այս մասին Եանգ-Իւ, համարեա բոլորովին համապատասխան է Չինաստանի գործերին լաւ տեղեակ եւրոպացիների, ինչպէս օրինակ, Պեկինի գերմանական նախկին դեսպան Ֆօն-Բրանդտի կարծիքին։

«Հիմնական պատճառը,—ասում է Եանգ-Իւ,—որ նախապատրաստեց եւ առաջ բերեց ներկայ ընդհարումը, այն ատելութիւնն է, որ չինական ժողովուրդն երդուել է տածել դէպի քրիստոնեաները։ Անկասկած, օտարազգի քարոզիչների նպատակը—բարիք անել ուրիշներին—շատ գովելի է, բայց ընդհանուր առմամբ՝ բոլոր բարեմիտ չինացիները ամենեւին ցանկութիւն չունեն հրաժարվելու սեփական կրօնից, որ ժառանգել են իրանց հայրերից, ընդունելու համար մի այնպիսի կրօն, որ բոլորովին խորթ եւ օտար է նրանց համար։ Այստեղից ստացվում է այն հետեւանքը, որ նորադարձները, դժբաղդաբար, լինում են անազնիւ մարդիկ, որոնք պաշտպանութիւն են որոնում քրիստոնեայ եկեղեցու ծոցում, որպէս զի անձնատուր լինեն իրանց վատ կրքերին, անպատիժ կողոպտեն, չահագործեն իրանց հայրենակիցներին եւ երկար տարիներ դատ վարեն նրանց դէմ։ Ժողովրդի զգացմունքները, որոնք առաջ բարկութեան եւ զայրոյթի զգացմունքներ էին եւ սկիզբն են առել ոչ այսօրվանից, փոխվեցին հեղհեղուկ անհաշտ ատելութեան, որի կատաղի բռնկումը այլ ես անհնար էր զսպել։ Չինացիները նոյնքան քիչ ցանկութիւն ունեն քրիստոնեայ դառնալու, որքան եւրոպացիները ընդունելու Կոնֆուցիոսի ուսմունքը։

«Իմ անձնական կարծիքն այն է,—շարունակում է դեսպանը,—որ առեւտրական յարաբերութիւնները չինացիների եւ օտարերկրացիների մէջ կարելի է զարգացնել ինչ աստիճանի էլ կամենաք, բայց ինչ վերաբերում է կրօնական հարցին, պէտք է ասեմ, որ աւելի խոհեմութիւն կը լիներ թոյլ տալ ամեն մարդու պաշտել իր ցանկացած կրօնը. այս վարմունքը կարող էր առաջն առնել ապագայ ընդհարումների։ Զը գիտեմ, կը հասկանան արդեօք, վերջապէս, եւրոպական կառավարութիւնները այս հարցի մեծ կարեւորութիւնը, որպէս զի մի անգամ ընդ միշտ հրաժարվեն յիշված ձգտումներից»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վիէննայի առեւտրականների օրգան «Handelsmuseum» հաղորդում է մի շարք հետաքրքրական փաստեր, որոնք բնորոշում են Թիւրքիայի մաքսատների կարգերը. «Ներկայումս գոյութիւն ունեցող օրէնքներով,—ասում է լրագիրը,—հրայանների, ատրճանակների եւ գնդակների ներմուծումը Թիւրքիա խստիւ արգելված է։ Այս պատճառով այն ճանապարհորդները, որոնց մօտ գտնվում է որ եւ է զէնք, թէկուզ մի փոքրիկ ատրճանակ՝ վերցրած անձնապաշտպանութեան համար, ենթարկվում են անտանելի դժուարութիւնների։ Արգելված է ներմուծել այնպիսի առարկաներ, որոնք որ եւ իցէ յարաբերութիւն ունեն հեռագրական գործիքների հետ։ Այս հիման վրա նորերումս մաքսատան աստիճանաւորները բռնեցին էլէքտրական բատարէյեաներ, որոնք ուղարկված էին մի հիւանդանոցի։ Նոյն հիման վրա գրաւեցին չանթարգելի երկաթեայ լարերը, որ մի վաճառական բերել էր տուել արտասահմանից։ Օտար երկիրներից ստացված գրքերը եւ լրագիրները, գրեթէ միշտ, համարվում են հակառաւարչական, ուստի եւ բռնվում են։ Բայց Թիւրքական գրաքննութիւնը չէ բաւականանում միայն դրանով. նա ամենայն ուշադրութեամբ հետեւում է նոյն իսկ բէկլամներին, որոնք պէտք է շատ զգուշութեամբ կազմված լինեն թէ բովանդակութեան եւ թէ նկարների կողմից, որպէս զի գրաքննիչները չը գտնեն նրանց մէջ որ եւ է յանցանք Թիւրքիայի քաղաքականութեան կամ կրօնի դէմ։ Այս պատճառով շատ վտանգաւոր է վաճառականների համար տպագրել իրանց ապրանքների վրա որ եւ է պատկեր։ Առհասարակ այն մաքսային խստութիւնները, որոնք այժմ գործադրվում են Թիւրքիայում, իրանց նմանը չունեն ամբողջ աշխարհում»։

—«Matin» լրագիրը հաղորդում է, թէ Չինաստանում գործող զօրքերի գլխաւոր շտաբի ղեկավարութիւնը յանձնվելու է մի ֆրանսիական գեներալի։ Լրագրի ասելով, այդ պաշտօնի համար ընտրված է գեներալ Նեգրիէ։

—«Kölnische Zeitung»-ին հեռագրում են Սօֆիայից, թէ մակեդօնական կօնգրէսը, որ մօտ օրերումս սկսեց իր նիստերը այդ քաղաքում, նորից նախագահ ընտրեց հէնց այն Սարաֆովին, որին բուլգարական իշխանութիւնները մեղադրում են որպէս մի անձի, որ մասնակից է պրոֆէսօր Միխայլէանովի սպանութեան։ Սարաֆով, տեղեակ լինելով այդ մեղադրանքին, յայտնեց կօնգրէսի նիստերից մէկում, թէ նա պատրաստ է բուլգարական իշխանութիւնների հրաւէրով գնալ դատարան եւ ցրել իր վրա բարդած մեղադրանքները։ Մակեդօնական յանձնաժողովի օրգան «Реформи» խիստ լեզուով դատապարտում է այն մարդկանց, որոնք քաղաքական սպանութիւններ են կատարում Բուլգարիայում եւ հերքում է մակեդօնական կոմիտեի մասնակցութիւնը այդ գործում։

—«Francfurter Zeitung»-ին հեռագրում են, թէ Միլան հրաժարել է իր բոլոր արժէթղթերը Բելգրադից փոխադրել Վիէննա։ Ասում են, թէ նա մտադիր է բոլորովին հրաժարվել Բելգրադից եւ մշտական բնակութիւն հաստատել Վիէննայում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

17 օգոստոսի

Գիւղական հողային բանկին ժամանակաւորապէս, յընթացս 10 տարվայ, սկսած 1901 թւականի յունվարի 1-ից, իրաւունք է տուած գնել եւ վաճառել հողերը իր դրամագլխի հաշուով։

Գեներալ Բեննենկամպֆի զօրաբաժինը, թշնամուն հալածելիս, Այգունից մինչեւ Խինգան, հետեւալ կորուստներն ունենաւ,—սպանվեցին 3 օֆիցէր եւ 22 զինուոր, վիրաւորվեցին 4 օֆիցէր եւ 79 զինուոր. ապա հալածանքը շարունակելիս՝ զօրաբաժինը կորուստներ չունեցաւ։ Մի եւ նոյն ժամանակ Բեննենկամպֆ յուլիսի 23-ին վերցրեց Այգունի մօտ երկու թշն-

դանօթ, Էիւրի մօտ, Խինգանի լեռնաշղթայի վրա, Մերգենում—33 թնդանօթ։ Գեներալ Ռենենկամպֆի զօրաբաժինը օգոստոսի 13-ին գտնվում էր Նիննեանջան գիւղի մօտ, որտեղից հնարաւոր արագութեամբ շարունակում է առաջխաղացութիւնը։

ՀՕՆԳԿՕՆԳ։ Երկու հարիւր աւազակներ, օգոստոսի 13-ի գիշերը, յարձակումն գործեցին Կանտօնի թաթարական քաղաքամասի վրա եւ կողոպտեցին չորս տուն։ Ենթադրում են, թէ յարձակման շարժառիթը Կանտօնի բնակիչների ատելութիւնն է դէպի հիւսիսի բնակիչները. բացի այս դէպքից՝ Կանտօնում ուրիշ անկարգութիւններ չեն պատահել։ Ինչպէս հաղորդում են Ամոյից, այնտեղ հասել է անգլիական կրէյսեր «Իզիս»։—Լուրերին նայելով՝ Ֆորմոզայից հասել են Ամոյ 12,000 եապօնական զօրքեր։

ՏԵԱՆՋԻՆ։ Տեանձինի շրջականերում ամեն ինչ հանգիստ է։

ՀԱԱԳԱ։ Բօէրական պատուիրակութիւնը երէկ երեկոյեան հասաւ Հաագա։

ՇԱՆԳՀԱՑ։ Մի գերմանական բանկի եւ Զժանչժիցզու փոխարքայի մէջ այժմ բանակցութիւններ են վարվում մի միլիոն տայէլի փոխառութեան վերաբերմամբ, որին, իբրեւ երաշխաւորութիւն, պէտք է ծառայեն փոխարքայի մի քանի արդիւնագործական ձեռնարկութիւնները։

ՀՕՆԳԿՕՆԳ։ Գեներալ Գեզլիից ստացված է հեռագրական հաղորդագրութիւն, թէ անօգուտ է նոր զօրքեր ուղարկել դէպի հիւսիս. այս պատճառով 4-րդ բրիգադայի առաքումը տեղի չի ունենայ։

ՇԱՆԳՀԱՑ, Օգոստոսի 10-ին չինացիները Տեաչչուում խիստ պարտութիւն կրեցին. պրինց Տուան եւ 1500 չինացիներ ընկան պատերազմի դաշտում. մնացեալները հալածվեցին եապօնացիների միջոցով Զժիլիի նահանգից։ Եաօշիկայ մեծ յաղթութիւն տարաւ «Մեծ բռունցքի» եւ Պէյձեանից ու Խեսիուից եկած կայսերական զօրքերի հետ ունեցած կռիւ մէջ, որի ժամանակ ընկան 1500 մարդ։ Հաղորդակցութիւնը Տեանձինի եւ Պեկինի մէջ առաջվայ նման բոլորովին կտրված է։ Սուրհանդակների համար ճանապարհը վտանգաւոր է, որովհետեւ այնտեղ շրջում են «Մեծ բռունցքի» հրոսակներ։ Երկիրը Եանձունից դէպի հիւսիս հեղեղված է։

18 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օգոստոսի 17-ին Նոցա Կայսերական Մեծութիւնները Օգոստափառ երեխաների հետ ժամանեցին Բէլովէժ։

ՏԵԱՆՋԻՆ։ Գեներալ Լենեվիչ զեկուցանում է օգոստոսի 16-ից, որ օտար դեսպանութիւնների հետ փոխադարձ համաձայնութեամբ պետութիւններից ոչ մէկի զօրքերը կայսերական պալատը դեռ չեն մտել. պալատի դռների մօտ կանգնեցնած են դաշնակից զօրքերի պահական զինուորներ։ Կայսերական կառավարութիւնը փախաւ,—թէ ուր, յայտնի չէ։ Մինիստրներից շատերը մինչեւ եւրոպական զօրքերի գալը մահվան պատժի են ենթարկվել։ Լրտեսների հաղորդած տեղեկութիւնների համեմատ, հարաւային-պարկում բռունցքականներ կան. մտադրութիւն կար այս օրերս դուրս քշել նրանց այդտեղից։ Մեր զօրքերը գրաւեցին բրնձի պահեստներ մինչեւ 80 միլիոն պուդ։ Ցունգ-լի-եամէնում գտնված է արծաթի փոքր քանակութիւն։ Պաշարման ժամանակ մեր այն զօրքը, որ պաշտպանում էր դեսպանութիւնը,—հերոսաբար էր պահում իրան։ Դէսանտի հրամանատարը, բարոն Բաղէն ղեկավարում էր պաշտպանութեան։—Գեներալ Լենեվիչ հաղորդում է, որ օգոստոսի 6-ին մեր զօրքերի մի փոքր զօրաբաժին, փոխգնդապետ Իլինսկու հրամանատարութեամբ, գրաւեց կայսերական ամարային պալատը, դէպի հիւսիս-արեւմուտք Պէկինից. կորուստներ չը կան։ Մեր թնդանօթաձիգ զինուորները Պէկինում գտան 30 թնդանօթներ եւ շատ հրացաններ։—Գեներալ Գրոդէկով զեկուցանում է. «Երկու օր շարունակվող ընդհարումներից յետոյ, գեներալ Սախարովի զօրաբաժինը գրաւեց Աժեխէ, նոյնպէս խլեց եօթ թնդանօթներ, շատ ռազմամթերքների եւ պաշարեղէնի մեծ պահեստներ։ Մեզանից վիրաւորված են 8 մարդ։

ՖՈՒԴՈՒՏՈՒՆ։ Զօրքը եւ համարեա ամբողջ ազգաբնակութիւնը փախան։ Կազմակերպված են զօրաբաժիններ Նիկոլսկի զօրաբաժնի հետ կապ հաստատելու եւ երկաթուղիական գիծը գրաւելու եւ պաշտպանելու Աժեխէից դէպի արեւելք։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Ֆինանսների մինիստր Վիտտէ ժամանեց այստեղ։

ՄԱՍՍԷՐՈՒ։ Իւրաքանչիւր րօպէ կարելի է սպասել յարձակման Լէդի-Բրանդտի վրա. երեւում են բօէրների կրակները լեռների վրա։ Այստեղի զինուորական իշխանութիւնները վճռեցին պաշտպանել Լէդի-Բրադտ։

ԳԼԱՍԳՕ։ Այստեղ յայտնված հիւանդութեան բակտէրիոլոգիական հետազօտութիւնը աւարտված է։ Ժանտախտի գոյութիւնը պաշտօնապէս յայտարարված է։ Ներկայումս բժիշկների հոգատարութեան տակ գտնվում են ժանտախտով 11 հիւանդներ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(ժամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը։		№ 3 գնացքը։	
Բաղուից դուրս է գալիս ցեր.	4 ժ. 1 ր.	գիշ.	11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 » 53 »	եր.	5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	9 » 32 »	եր.	6 » 34 »
Բաթում է հասնում եր.	9 » 1 »	առ.	7 » 14 »

№ 6 գնացքը։		№ 4 գնացքը։	
Բաթումից դուրս է գալիս առ.	7 ժ. 50 ր.	եր.	7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում եր.	7 » 15 »	առ.	8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	7 » 18 »	»	10 » 05 »
Բաղու է հասնում ցեր.	12 » 10 «	»	5 » 16 »

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս	ցեր.	11 ժ. 19 ր.
Բաթում է հասնում	երեկ.	9 » 41 »
Բաթումից դուրս է գալիս. . . .	գիշ.	11 » 18 »
Թիֆլիս է հասնում	առաւ.	9 » 30 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս.	երեկ.	9 ժ. —
Ալէքսանդրօպոլ հասնում է . . .	առ.	7 » 46 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 » 56 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	3 » 29 »
Ալէքսանդրօպոլից դուրս է գալիս .	երեկ.	8 » 35 »
Թիֆլիս հասնում է	առ.	7 » 15 »

Մայր Աթոռի

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

հարկաւոր է մաթեմատիկայի հմտալսարանաւարտ մի ուսուցիչ՝ շաբաթական 18—19 դասով եւ 1500 ր. ռոճկով։ Դիմել ճեմարանի վարչութեան, Էջմիածին։ 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

տեղեկացել է, որ ինչ-որ նրան անյայտ անձինք առաջարկում են «Լօգկիս-Գօրա» եւ «Նախալօվկա» կոչված տեղերում հողեր կապալով վերցնել ցանկացողներին՝ որոշեալ վճարով ձեռք բերել Վարչութիւնից յիշված կապալները։ Կամենալով վերջ դնել դիւրահաւատ մարդկանց շահագործողների արարմունքին, Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ամենքի, որ Նախալօվկայում հողեր դեռ եւս չեն տրվում կապալով, մինչեւ ընդհանուր յատակագծի կազմելը, իսկ «Լօգկիս-Գօրայում» տրվում են առանձին կանոններով, որոնք հաստատված են Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի կողմից եւ այն անձինք, որոնք ցանկանում են հողեր կապալով վերցնել այս վերջին տեղում, կարող են ստանալ առանց որ եւ է միջնորդութեան, դիմելով իրանց խնդիրներով ուղղակի Վարչութեան, եթէ միայն համաձայնասխանում են խորհրդարանի որոշման մէջ յիշված կանոններին։ 2—3

ԴՊՐՈՑ
տիկ. Կատ. Լիսիցեանցի

երկու սեռի մանուկների համար։ Դիտելի պարապմունք իր հարազատ երեխաների հետ։ Ընդունելութիւնը՝ սահմանափակված։ Սեպտեմբերից բացվում է նաեւ պանսիօն։ Դիմել—օգոստոսի 26-ից—Բեհբութեան փողոց (նախկին Սադովայա), սեփ. տ. № 29)։ (եչ.) 15—25

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Յ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

(գոյ. VIII-րդ տարին, Николаевская ул.. д. № 33).

Աշակերտներն ընդունվում են 7—15 տարեկան հասակի՝ իբրեւ գիշերօթիկ ու երթեւեկներ նախապատրաստութեան եւ բոլոր պետական դպրոցները մտնելու համար, այն է՝ գիմնազիաներ, ռէալական, վաճառականական եւ ուրիշ պետական դպրոցներ։ Դպրոցում աւանդւում են հայոց լեզու, կրօն եւ այլ առարկաներ։ Գիշերօթիկ աշակերտները այս տարի աւելի լաւ պայմանների մէջ դրված կը լինեն՝ թէ ուսման եւ թէ դաստիարակութեան տեսակէտից. պիտի աւանդվեն նոր լեզուներ, աւելի գործնական կերպարանք տալով առարկաներին։ Վճարը չափաւոր է՝ ըստ համաձայնութեան։ Երկու երթեւեկ եւ մի գիշերօթիկ կընդունվեն ձրի օրը, չքաւոր երեխաներից դպրոցի կառավարչի բարեսիրտ ընկերների վերկայութեամբ։ Յ. Ղարագեօզեան

(յ.) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

յայտնում է ի տեղեկութիւն ծնողների եւ խնամակալների, որ աշնանային ընդունելութեան քննութիւնները կը նշանակվեն սեպտեմբերի առաջին թուերում, որի մասին կը յայտարարվի լրագիրներում առանձին։

2—5 Դիրեկտորի փոխանակ՝ Ա. Եակովլեվ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 30 օգոստոսի (12 սեպտեմբերի) ԺՕՐԺԻ շոգենաւը, նաւապետ ԼԱՆՆԵՐ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին աշրգ. ետո։

Կարանտինի պատճառով ընկերութիւնը չէ կարող երաշխաւորել շոգենաւերի կանոնաւոր ուղեգնացութեան համար Բաթումից։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Ս. Գ. Բառոկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեանններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասնոկոզի № 27։ ՆՈՎՈՐՕՍ. ՍԻԲՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն։ 21—26

II ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
Ա. ԴԵԱԶԿՕՎԱՅԵԱԻ
ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԲՈՎ

Կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի թոյլատրութեամբ՝ այս տարվայ սեպտեմբերին ես բաց եմ անում II կարգի մասնաւոր դպրոց աղջիկների համար եւ ուսումնարան՝ երկու սեռի երեխաներին պատրաստելու միջնակարգ դպրոցների ստորին դասարանների համար՝ աղջիկների պանսիօնով։ Յայտարարութիւններ մտնելու մասին ընդունվում են ամենայն օր, առաւօտեան 8 ժամից մինչեւ 1-ը, ուսումնարանի շինութեան մէջ, որ գտնվում է Ելիսավետինսկայա փողոցում, բժիշկ Սամոյլովիչի տանը, № 154։ (յ.) 3—5

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղագրի ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Յովհաննեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ Каспарову. (ե. չ.) 16—25

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են պետական դպրոցների համար կազմած հայոց կրօնի դասագրքեր՝ Եղնիկ ա. քհ. Երզնկեանի աշխատասիրութեամբ.

I. Առաջին գրքոյկ, պատրաստականների համար. ,,ԱՂՕԹՔՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ,,։ Գ. տպագր. Գինը 20 կոպէկ։

II. Երկրորդ գրքոյկ, Առաջին դասարանի համար. ,,ՀԻՆ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ,,։ (Նոր հրատարակութիւն)։ Գինը 30 կ.։ (ե. հ. չ.) 2—10

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՄՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաք սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսերի տիմնոզի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիզօնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Յովհաննէսների բանկային գրասենեակում և կուրսերի տիմնոզի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (յ. չ.) 16—25

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Августа 1900 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.